

Հովհ. Շիրազ



ԲԵՎԵՌԻ

891.99

Շ-64



-6 NOV 2011

ՀՈՎԷՆ ԴԻՐԱԶ

891.99
7-64

u m .

ԲԵՎԵՈՒ ԱՌՈՒՄԸ

Շապիի Գեորգ

Կ. Տերտուրյանի

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

15 JUL 2013

47779



1649

38

ՆԱԽ—ՅԵՐԳ

Ով սիրածի հետ ե հիմա,
Ով նայում ե լուսնի վրա,
Ով այգու մեջ ծառ ե տնկում,
Ով վոսկի յե հանում հանքում,
Ով գրում ե, կարդում ե գիրք,
Ով քաղում ե կանաչ ու միրգ,
Ով բամբակի արտն ե ջրում,
Ով վոչխարն ե պահում սարում,
Ով խոսում ե աստղերի հետ,
Ով անցնում ե ծովեր վետ-վետ,
Ով ջրերից ձուկ ե բռնում,—
Յերբ վոր հոգնած տուն դառնում,
Թող գեթ մի պահ
Յերգս կարդա.—
Աշարհացունց թռչնի մասին,
Վարի առջև մրրիկն ե սին...

Ի՞մ հայրենիքն հնուց ունեւ
 Յեկրասասան դյուցազուններ,—
 Ժողովրդի հողից ծնված,
 Ու վազրենի կաթով սնված,
 Վորոնք յեւան ու մուեգին
 Աշխարհակալ աֆն գարշ մեկին
 Արին փոշի իրենց փոռքին,
 Ապա աֆն հին, սին աշխարհքի
 Նենգ տերերին՝ մանր ու խոշոր
 Ծվատեցին ահեղ մի որ՝
 Հրդեհներով մոխրացրին...
 —Ազատութիւնն ու կյանք բերին
 Ժողովրդի ու զորքի հետ՝
 Բերին կյանքը այս ծաղկավետ,
 Վոր շնչում է ազատութեամբ
 Ու խնդումով ջինջ ու անամպ
 Լցնում սիրտն աշխատողի,—
 Գարուն պճնում կրծքին հողի:

Ի՞մ հայրենիքն ահա կրկին
 Դյուցազուններ ունի անգին՝
 Յերկնասասանն ու անվեհեր,
 Վորոնք ունեն արծվի թեւեր:—

Նրանք դեմքով առողջ վարդի
 Զավակներն են ժողովրդի,
 Վոր առյուծի նման ծնվել
 Ու մայր հողի կաթով սնվել:
 Թեւ էն առել,
 Արծիվ դառել:
 Աչքերը լի արեւներով,
 Հոգիները՝ յերազներով,
 Սիրտը՝ սիրով առաջնորդի,
 Վորը նրանց, փորպես արփի,
 Կյանք է տալիս ու փայփայում,
 Արեւ-աչքով խորքը նայում,
 Սիրտ է տալիս ամեն մեկին,
 Ուժ է բերում նոր աշխարհքին
 Ու վողջ կյանքին,—
 Վոր դյուցազներն ունի անգին...

Յեւ դյուցազներն ահա սիրով
 Պիտի թռչեն հուր թեւերով
 Դեպի հյուսիս, անհայտ կողմեր,
 Սուրան փորպես հզոր հողմեր,
 Խորն հեռուններ յերազային,
 Վոր եւ, վաղուց նրանք կային,—
 Բայց չեր տեսել աչքը մարդու
 Յեւ հեռատես և՛ կենսատու...

Յեզ հերոսներն այն թեվալոր՝
 Լցված սիրով յերկրիս հզոր՝
 Նայեն չքնաղ հայրենիքին,
 Ապա անձիր, մով լերկնքին,
 Ու՝ վողջերթի աղմուկն հնչեց,
 —«Բարի ճամբան» աշխարհ կանչեց.
 Յեղան՝ թռան...

4

Հեյ, կանգնեցեք, հողմեր վայրագ,
 Ե՛յ, մրրիկներ,—
 Դո՛ւք, ծովահեր,
 Ծալեք ձեր խոլ թեվերն արագ,
 Դյուցազները թռչում են վեր:
 Անցնեն պիտի հրե՛ հույզով
 Հավերժական ցուրտ հյուսիսով,
 Վոր գագաթն է հողագնդի,—
 Նրանք այնտեղ իջնեն պիտի,
 Ուր չի դիպել ձեռքը մարդու՝
 Յեզ խանդավառ, և՛ կենսատու:
 Իջնեն պիտի նրանք այնտեղ,
 Ուր չի շնչել դեռ վոչ մի ցեղ,
 Ուր չի իջել դեռ վոչ մի թեվ,
 Ուր չի հնչել մի խոսք թեթև,
 Ուր լինել են ուզել սիրով՝
 Լցված անձիր յերազներով՝

Քանի սրտեր, վորոնց թաղել՝
 Ձյունն է հավերժ անհայտ թողել...

5

Ահա և խոլ բեվեռը սառ,
 Ե՛յ հեյ, հողմեր, առեք դադար:
 Բայց հողմերը չեն դադարում՝
 Արշավներ են անեղ վարում,
 Մերթ մառախուղն ականակիր
 Լուռ ծածկում է ծով ու լերկիր,
 Մերթ ծանրացող գիշերվա պես
 Թուխ ամպեր են գալիս հանդես,
 Ու ցուրտն անգուլթ, անեղ փչում
 Տիեզերքն է վողջ հառաչում,
 Կարծես մահվան լերկունքն է դա,
 Վորի միջով մեր արևկա
 Դյուցազներն են անեղ թռչում
 Յեզ արծիվներն են շառաչում
 Հուր սրտերով, յերկաթաթև՝
 Հեքիաթային ճախրով թեթև...

6

Հողմն է գոռում սառն ու անգուլթ,
 Ծանրանում են ամպերը մուլթ,
 Փակում ճամբան տիեզերական,
 Զարկում հանկարծ անեղաձայն
 Արծիվներին յերկաթաթև,

Վոր ամպերն են թողնում յետե,
 Յեվ սլանում խավարներով,
 Նետերի պես ճեղքում սիրով
 Հորձանքն ահեղ, սառն հողմերի,
 Վոր տարերքն է բյուր կողմերի...
 Ու աներկյուղ մաքառումով
 Յերկնասասան, բոցեղ թափով
 Հողագնդի գազաթն հասան,
 Իջան զվարթ և խնչ տեսան՝
 Միայն հավերժ ձյուն ու ձմեռ,
 Մեռած մի ծով ու սառցալեռ:
 Տիեզերքը մութ ու մթին,
 Խոլ մառախուղ ու մահ չորս գին,
 Անափ, անծեր,
 Անհայտ ափեր.
 Յեվ ամենուր բուք ու բորան,
 Արեվն հեռու՝ ասես մեռած,
 Յեվ մի հսկա սառցի վրա
 Նրանք իսկույն զարկին վրան
 Ու ներս մտան անմահ սիրով՝
 Գիշերն իջավ յերազներով:

7

Լույսը բացվեց լերերի վրա,
 Արեւ ծագեց փոսկեզրան,
 Արար-աշխարհ գործի յեղան:
 Առու, աղբյուր կցուցողան...

Բայց բեվեռում
 Հողմն է գոռում,—
 Շուրջն ամայի ափեր մեռած,
 Սառցալեռներ, ծովեր սառած:
 Ու հեռագիր յեկավ սիրով՝
 —«Գրավված է բեվեռը ծով,
 Մեծ ՍՏԱՆԻՆ, մեզ հետ ես միշտ,
 Մենք հպարտ ենք, հավետ անվիշտ
 Յեվ բեվեռի ցուրտ գազաթին
 Զարկինք մեր ալ-դրոշն անգին,
 Վոր փողփողա նա շարունակ՝
 Աշխարհն առած իր շուքի տակ»:
 Ու յերկրի հետ չքնաղ ու վես
 Կարդաց, ժպտաց արեւի պես
 Առաջնորդը մեր լուսախոհ,
 Վորից անգամ արեւն է գոհ:

8

Համբալն հասավ ամենուրեք՝
 Ծովերից ծով աշխարհ անցավ,
 Թե մեր դրոշն ալ-վառ ու սեզ
 Յուրա բեվեռից վեր խոյացավ:
 Թե աշխարհի սառ գազաթին
 Վոտքը դիպավ հզոր Մարդ ու:

*
*
*

Իմ հայրենիքն ունի անգլին
 Դյուցազուններ, վորոնց կրծքին
 Շքանշանն է վառվռում
 Յեվ մեր դեմքին ժպիտ փռում:
 Ճնծությունով յերկիր թնդաց,
 Վարդեր իջան նրանց գլխին
 Յեվ ծաղիկներ՝ սիրով ցողված,
 Յեվ համբույրներ ջերմ ու անգլին
 Յեվ յերգ հյուսվեց՝ համբույրներով,
 Յեվ կարոտից աստղերն իջան՝
 Յեվ յերկինքը ժպտաց խոնարհ
 Դյուցազներին իր աստղերով....

ՎԵՐՋ—ՅԵՐԳ

Յեվ աշխարհի վեա գագաթին
 Փողփողում է դեռ կաթոգին
 Կարմիր ու վառ մի դրոշակ՝
 Վողջ հողագունդն իր շուքի տակ:

1937 թ.

Պատ. խմբագիր՝ Մկրտիչ Գորյուն
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

1649
85

Գլավխաի լիազոր՝ Կ—4726. Հրատ. 4481
 Պատվեր 71. Տիրաժ 3000.
 Թուղթ. 72×105 Տպագր. 3/4 մամ.
 Մեկ մամ. 16600 նիշ. Հեղինակային 0 2 մամ.
 Հանձնված է արտադրության 17 հունվ. 38 թ.
 Ստորագրված է տպագրության 11 փետր 38 թ.
 Գինը 65 կոպ.

Գեոհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0351616

4502 65 407.

175

47719

ОГАНЕС ШИРАЗ
ВЗЯТИЕ ПОЛЮСА
ГИЗ АРМ. ССР. ЕРЕВАН